

«Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում»
ՀՀ վարչապետի մրցանակաբաշխություն

Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության խրախուսման գործում լրագրողների մասնակցությունը ըստ արժանվույն գնահատելու նպատակով հայտարարվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի մրցանակաբաշխություն.

Մրցույթի պայմանները.

Մրցույթին կարող են ներկայացվել 2013-ի մարտի 1-ից մինչև 2013-դեկտեմբերի 1-ը հրապարակված նյութերը հետևյալ անվանակարգերում.

- **Հեռուստատեսություն և ռադիո**
- **Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներ**

Անվանակարգերում կարող են առաջադրվել Երևան քաղաքի և ՀՀ մարզերի հեռուստառադիո հեռարձակման, ինչպես նաև տպագիր և էլեկտրոնային մամուլի ներկայացուցիչները, ովքեր 2013 թվականի նշված ամիսների ընթացքում.

- բարձրացրել և վերլուծել են գենդերային բնույթի խորքային խնդիրներ,
- անդրադարձել են համայնքային մակարդակում գենդերային խնդիրների լուծման լավագույն փորձին
- լուսաբանել են կանանց գործարար և հասարակական նախաձեռնողականության և առաջնորդության լավագույն օրինակները
- հրապարակել են նյութեր ուղղված գենդերային կարծրատիպերի վերացմանը:

Նախատեսվում են մրցանակներ առաջին, երկրորդ և երրորդ տեղերի համար: Մրցանակակիրները կստանան նաև խրախուսական պարգևներ հասարակական և միջազգային կառույցների կողմից:

Ներկայացված աշխատանքները կգնահատի մասնագիտական ժյուրին, որը կազմված կլինի կանանց հիմնահարցերով աշխատող մասնագետներից և լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Անհրաժեշտ է ներկայացնել.

Հրապարակված նյութը

- Առցանց հրապարակված նյութի էլեկտրոնային հասցեն
- Մամուլում տպագրված նյութի օրիգինալը կամ պատճեն
- Հեռուստատեսայորտաժը DVD սկավառակով 1 օրինակ՝ եթեր հեռարձակված հեռուստաընկերության լոգոյով , ինչպես նաև ՀԸ կողմից տրված տեղեկանքով՝ նյութի եթեր հեռարձակման ամսաթվի վերաբերյալ
- Ռադիոնյութը CD kam DVD սկավառակով

Լրագրողի CV, լրագրողի և լրատվամիջոցի կոնտակտային տվյալներ, նյութի համառոտ նկարագրություն:

Լրագրողական նյութերի ներկայացման վերջնաժամկետն է 2013-ի դեկտեմբերի 5-ը:

Նյութերը կարող են ներկայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 12.00-ից մինչև 16.00 ՀՀ կառավարության՝ «Հրապարակում,, հեռուստաձրագրի խմբագրություն, Հանրապետության հրապարակ, Կառավարության թիվ 1 շենք հասցեով:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 010 515935 հեռախոսահամարին կամ գրել hraparakum@gmail.com հասցեով:

ՀՀ կառավարությունը 2010 թվականի փետրվարի 11-ի N5 արձանագրային որոշմամբ հավանության արժանացրեց «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», հաստատելով իր հավատարմությունը գենդերային հավասարության գաղափարախոսությանը: Վերջինը ենթադրում է հավասար պայմանների և հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի դրսևորման համար՝ ի նպաստ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը:

Գենդերային հավասարությանը հասնելու ճանապարհին գենդերային կարծրափայտերի և գենդերային խտրականություն վերացման հարցում մեծապես կարևորվում է լրատվամիջոցների դերը, քանի որ այսօր այն մեծ նշանակություն ունի հասարակության կարծիքների, աշխարհայացքի և արժեքային համակարգի ձևավորման գործում: